396-398. **ԱԽԱԼՑԽԱ** գործած են ՄԿՐ. ՂԱԼԱՄԳԱՐԵԱՆ (Բանդած օջախ, 1889. Որբուկի օրը, 1901): ** ԵՂԲ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ (Նոր վէպիկ, Արեան վրէժ, 1905-6) ևն.: ** ԽՈՐԷՆ ԱՄԱՐԵԱՆՑ (Աւստրիայի ճգնաժամը, 1906):

399. **ՆՈՐ ԲԱՅԱԶԻՏ** քաղաքին մէջ 1890 ին դրոշմուած կը գտնենք Աշըգ-Յագայիի **Ամրահ եւ Սալվի** անուն երկասիրութիւնը:

400-401. **ԳԱՆՁԱԿ**ի գաւառին վրայ շահեկան ուսումնասիրութիւն մը ունի Ե. Լալայեանց՝ 1900-1 ին Թիֆլիզ հրատարակած 2 հատորով: — Իսկ ԳԱՆՁԱԿի մէջ գործած են Թ Ա Ռ Ո Ի Մ Ե Ա Ն և Փ Է Օ Դ Օ Ր Ո Վ տպագրիչները, որոնցմէ առաջինը տպած է տեղւոյն Սուրբ Յովհաննէս Մայր եկեղեցիին **Հաշիւները** (1893...5):

402. **ՎԱՐՆԱ** գործած է Ն. Պ. ԳՈՒՐՈԿԵԱՆ՝ 1901-4ին տպելով հետեւեալները. — Ընթերցողների ուշադրութեանը, Պզտիկ Մհեր, Որբիկների արցունքները:

403. **ՎԼԱՏԻԿԱՎԿԱԶ** (Կովկաս) 1908 ին ՍՈՒՔԻԱՍԵԱՆՑ ԵՒ ԼԻՍԻՆԿՕ տպած են Ի՞նչպէս հիմնել գիւղատնտեսական ընկերութիւն:

404. **ԳՕՐԻՍ** (Կովկաս) 1910 ին «ՍԱՍՈՒՆ» տպարանէն լոյս ընծայուած է Զանգ-է-Զուր (յեգենտա պօէմա): — Դարձեալ, Գօրիսի մէջ հրատարակուած է **Գաւառ** թերթը՝ նոյն տարին: Ռուսիոյ ԱՆԱՊԱ քաղաքը Մ. Յ. Շուռ (Համայեակ Արամեանց) **խմորաշիկ** հրատարակած է 1905-7 **Օրգան** և **Իգէ՛ն** յեղափոխական թերթերը:

405. **ՍԱՄԱՐՂԱՆԴ** (Սըմըրղանտ) մայրաքաղաքն է Պուխարայի (Թաթարիստան կամ Թուրքիստան): Արիւնռուշտ Ճէնկիզ Խանի այս հայրենիքին մէջ — որ այժմ ռուս իշխանութեան տակ ինկած է, — ասկէ քանի մը տարի առաջ ՂԱԶԱՐՈՎ (կամ Ղազարեան) ունեցած է տպավիմագրատուն մը ուրկէ լոյս ընծայած է **Սեղանի գիրք** նորապսակ ամուսինների համար (1910), Լ. Թոլսթոյի թարգմանութիւն մը՝ **Թանկ արժէ** (1911):

## ՀԱՅ ԳՐԱՇԱՐՈՒՀԻ ԶՈՅԳԸ

Չորս հարիւր տարուան մէջ (1512-1912), բովանդակ աշխարհի վրայ հայերէն անհամար գիրքեր ու թերթեր լոյս ընծայող՝ աւելի քան 460 տպարան բացուած ըլլալով, եթէ ատոնցմէ իւրաքանչիւրը միջին հաշուով 3 գրաշար ունենար, Կիւթէմպէրկի հայ աշկերտներուն թիւը կը հասնի շուրջ 1400 ի: Այդ **հաւրու բազմութեան** **qar չoru hurhırling** **կու հոգի միայն** **մէջէն անատասիկ եր-** **ոնif աղջիկ են**: Օրիորդք Հայկանոյշ և Շուշան իջգոյէ հայ գրաշարի, վերջերս գրաշարութիւն ուսած, իրենց մեծանուն հօր՝ Մկրտիչ Փորթուգալեանի Մարսիլիոյ «Հայ տպարան»ը կ'աշխատին միայն, **Արմէնիա** թերթին 4 էջերը լեցունելով միշտ՝ իրենց կուսական քնքոյշ մատներով, և այսպէս, համատի փափկասուն սեռակիցներու ջախջախիչ դասը տալով յուլեայն թէ--պատուաւորութեան սահմանին մէջ -- ո՛չ մէկ ձեռարուեստ խոտելի է հայ իգական սեռին համար: — Անդրանիկը «լինօթիփիստ» ալ է, և ներկայիս մէջ օրավարձքով կ'աշխատի նոյն քաղաքը հրատարակուող «Լը Սէմաֆօռ տը Մառսէյլ» ֆրանսերէն օրաթերթին տպարանին մէջ: — Կեցցէ՛ ուրեմն հայ ֆեմինիզմը...:



ՕՐՔ. ՀԱՅԿԱՆՈՅՇ ԵՒ ՇՈՒՇԱՆ